Ը. ՏԱՐԻ 2180 — ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 13 ԱՀԵԿԱՆ 4383 — 20 ԱՊՐԻԼ 1891 — 23 ՐԱՄԱԶԱՆ 1308 — ՍԻԱԳ ՇԱԲԱԹ

40 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐԵՒԷ ԽՆԴՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ Ղալաթիա, Կ. Պոլիս

درعليەدە غلطەدە نورادونكيان خانندە آرەولك

غزتەسى ادارەسنە

Direction du journal AREVELK
Galata, CONSTANTINOPLE

# ԱՐԵՒԵԼՔ
## ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

| | |
|---|---|
| Կ. Պոլսոյ համար, Տարեկան | 150 |
| » » Վեցամսեայ | 75 |
| » » Եռամսեայ | 40 |
| Օտար երկիրներ, Տարեկան | 56 |
| » » Վեցամսեայ | 28 |
| Ընթեր թուղթի վրայ ..., Տարեկան | Օսմ. Ոսկի 2 |
| Գաւառաց ... | Ղրշ. 50 |

Les annonces sont reçues AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, ԱՊՐԻԼ 20/2 ՄԱՅԻՍ

## ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԱԿԱՐ Ա.

ԻՒՐ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ. — ԻՒՐ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ. — ՎԵՐՋԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՔ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Դ.

Երբ, Հոգելոյս Տ. Ներսէս Պատրիարքի կաթողիկոսական ընտրութենէ հրաժարման վրայ, Ջարը բեկանեց 1884 մայիսի կաթողիկոսական ընտրութիւնը, Սինոդը նոր ընտրութեան համար շրջաբերականներ հանեց, ըստ Պոլաժենիոյ «տարեւոր միջոց» նշանակելով, այսինքն՝ նոր ընտրութիւնն 1885 տարւոյ ապրիլ 17ին թողլով.

1884ին, ընտրութեան հրաւիրագիրք Կ. Պոլսոյ ռուսական դեսպանատունէն յանձնուած էին ի Պատրիարքարան՝ գաւառները ղրկուելու իւրաքանչիւր թեմին. Որովհետեւ 1884ին Ազգային Ժողովն՝ ի դիմաց գաւառացւոց ժամանակցելով կաթողիկոսի ընտրութեան՝ հրաւիրագրերն իրենց պոլաժենական ազդեցութիւն չունեցան, 1885ին Սինոդի հրաւիրագիրք ուղղակի գաւառները ղրկուեցան՝ հեւպատոսաց ձեռամբ յանձնուելու Առաջնորդներուն. Կ. Պոլսոյ թեմին ուղղեալ հրաւիրագիրը Ռուսիոյ դեսպանատունէն յանձնուեցաւ Պատրիարքական Տեղապահին, և Երուսաղեմի հանգուցեալ Տ. Եսայի Պատրիարք նոյն պահուն Կ. Պոլիս գտնուելով, Երուսաղեմի Միաբանութեան սահմանեալ հրաւիրագիրը Ն. Սրբազնութեան տրուեցաւ. Այս առաջին նշան պոլաժենական տրամադրութեանց ճշդիւ գործադրման՝ ոչ նուազ սրտայուզութիւն պատճառեց Կ. Պոլսոյ ազգային շրջանակաց մէջ 1885ի գարնան.

Արդէն, ինչպէս ժամանակ մը ետքն երեւցաւ Կաւկասիոյ Փոխարքայութեան քաղաքական դիւանին պետ Պառոն Նիքոլայի հաշակաւոր Տեղեկագրէն, որոյ Աբէ-Եւէ+ի մէջ անակնկալ իմն հրատարակութիւն ճշմարիտ յայտնութիւն մ'եղաւ, ռուս կառավարութիւն այս անգամ՝ 1885ին՝ որոշած էր ճշդիւ գործադրել Պոլաժենիոյ ինչ ինչ տրամադրութիւններ, որք ո՛ և իցէ նկատումով կամ հանգամանքով աւելի կամ նուազ մեռեալ տառ մնացեր էին ցայնվայր.

Ազգային Ժողով մարտ 1ին գումարելով ի ներկայութեան 52 երեսփոխանաց, վեցի դէմ միաձայնութեամբ տուաւ հետեւեալ որոշում.

1. Ազգային Ժողովը կաթողիկոսական ընտրութեան կը մասնակցի 1884ի եղանակին համեմատ.

2. Համագումար Ժողովոյ և Ազգային

[…]



ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԷՄԻԼ ՌԻՇՊՈՒՐ

## ԽԵԼԱԳԱՐԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

### ՓՐԿՈՒԹԻՒՆ

—Բայց ատիկա անկարելի է, պարոն. ոչ, չեմ կրնար հաւատալ . . .

Խօսքն ընդմիջեց սպասաւոր մը, շքեղ հագուած, որ դուռը բանալով ըսաւ.

—Պարոններ, սալոնին մէջ ձեզ կը սպասեն.

[…]

